

**1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ**

**1.4.1.Ձրադվածություն**

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2002թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1416.8 հազ. մարդ, որոնց 90.3 % կան 1279.2 հազ. մարդ զբաղված է տնտեսության մեջ, իսկ 9.7 % կան 137.6 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության զբաղվածության հանրապետական ծառայությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2002թ. փետրվարի վերջին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության զբաղվածության հանրապետական ծառայությունում հաշվառման կանգնած են եղել 161.2 հազար աշխատանք փնտրող քաղաքացիներ, որոնց 99.1% կան 159.7 հազարը չզբաղված քաղաքացիներն են: Գործազուրկի կարգավիճակ է ստացել չզբաղված քաղաքացիների 85.8% կան 137.0 հազ. մարդ:

2002թ. փետրվարին վերը նշված ծառայության կողմից հաշվառման են վերցվել 2.5 հազ. մարդ, որոնցից 2.0 հազարը կան 80.0% ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 3.1 հազ. մարդ, որոնցից 19.4%` աշխատանքի տեղավորման պատճառով:

**Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի, 2002թ. փետրվարին<sup>1</sup>**

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը		Նրանցից գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	%-ներով՝ նախորդ տարվա փետրվարի նկատմամբ	ընդամենը հազ. մարդ	%-ներով՝ նախորդ տարվա փետրվարի նկատմամբ
<b>Ընդամենը</b>	<b>161.2</b>	<b>90.8</b>	<b>137.0</b>	<b>89.7</b>
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	2.2	100.0	1.5	93.8
Արարատ	7.5	89.3	6.0	89.6
Արմավիր	8.9	74.2	6.6	71.0
Գեղարքունիք	8.8	82.2	6.5	85.5
Լոռի	24.6	100.0	21.0	98.6
Կոտայք	10.6	71.6	8.3	72.2
Շիրակ	33.6	100.9	29.1	98.6
Սյունիք	16.3	103.2	13.7	100.7
Վայոց ձոր	2.1	95.5	1.7	89.5
Տավուշ	4.6	88.5	4.1	87.2
Երևան	42.0	87.0	38.5	85.4

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 65.9%: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2001թ. փետրվարի նկատմամբ աճել է 1.1 տոկոսային կետով:

Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2002թ. փետրվարի վերջին կազմել է 589 մարդ, այդ թվում` 79.1% կան 466-ը`բանվորական մասնագիտությունների գծով:

2002թ. փետրվարին զբաղվածության հանրապետական ծառայությունների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 600 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը մեկ տեղի հաշվով կազմել է 271 չզբաղված մարդ:

Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2002թ. փետրվարին կազմել է 5.8 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը 3229 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկված որպես զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և

<sup>1</sup> ՀՀ սոցիալական ապահովության նախարարության զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով

գործազուրկներ) հարաբերակցություն, 2002թ. փետրվարին կազմել է 9.7% և հունվարի համեմատությամբ մնացել է նույն մակարդակի վրա, իսկ 2001թ. փետրվարի նկատմամբ նվազել է 1.0 տոկոսային կետով: